

ԿՐԹՆԱԿԱՆ

**ԹՈՒՂԹ ԿԻՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԱՌ ԿՈՍՏԱՆԴ ԿԱՅՍԻ
ԵՐԿԻՆՔԷՆ Ս. ԽԱԶԻ ՆՇԱՆԻՆ ԵՐԵՒՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Բարեպաշտ և աստուածասէր թագաւորն՝ Օգոստոս Կոստանդինոսի, Կիրեղ, Երուսաղէմի Եպիսկոպոսը, կը մաղթէ Տիրոջ մօլ ուրախութիւն:

Երուսաղէմէն՝ աստուածասէր թագաւորիդ ուղղեալ այս առաջին թուղթը (նամակը) կը գրեմ. քեզ կը վայելէ ընդունիլ, և ինձ՝ տալ:

Նպատակս չէ քեզի յորդորական խօսքեր գրել. այլ՝ երկնային և աստուածային տեսիլքի մը մասին պատմել: Եւ գրելիքս ոչ թէ գեղեցիկ ու ճարտասանական բանահիւսութիւն մը պիտի ըլլայ, այլ՝ սուրբ Աւետարանիչներէն կանխապէս ըսուածներուն ճշմարտութեան վկայութիւնը:

Որովհետեւ՝ ոմանք, որ նիւթապէս ունեոր են, քու պատուական գլուխդ կը պսակեն ոսկեհուռ փայլուն թագերով, որոնք գտնադան պայծառ քարերով զարդարուած են: Իսկ մենք նիւթական նուէրներով չէ որ կը պսակենք քեզ. որովհետեւ նիւթական ընծաներ ի վերջոյ կորստական են: Այլ քու բարեպաշտութեանդ փութով տեղեկութիւն կուտանք երկնաւոր իրաց մասին, որոնք քու աստուածասէր թագաւորութեանդ ժամանակ Երուսաղէմի մէջ տեղի ունեցան: Ու այս բանը կը գրեմ ոչ թէ որպէսզի անգիտութենէ աստուածգիտութեան դաս, այլ որպէսզի կարինաս ուրիշներուն ալ սորվեցնել քու բարեպաշտութիւնդ, և որպէսզի արդէն իսկ գիտցածներուդ վրայ աւելի ևս հաստատուի: Եւ թագաւորութեանդ նախկին վիճակին տիրելով Աստուծոյ կողմէ մեծ և երկնաւոր պսակով պատուուիս. և Ամենաթագաւոր Աստուծոյ ուսեալդ այժմ վայելչական գոհութիւն մատուցանեաւ. թշնամիներուդ վրայ մեծ յաղթանակ տանելով՝ քաջալիրութեամբ

լեցուիս: Արդարեւ Աստուած քու թագաւորութիւնդ սիրած ըլլալով, քու օրով հրաշալի երևոյթ մը կերտեց:

Քանզի աստուածասէր ու երջանկալիչատակ քու հօրդ՝ Կոստանդինոսի ժամանակ՝ փրկական խաչը գտնուեցաւ Երուսաղէմի մէջ Աստուծոյ շնորհօք. արդարեւ անոր, որ այս գեղեցիկ բարեպաշտութիւնն ունեցաւ, սուրբ տեղերը իրենց ծածկած գանձը ընծայեցին:

Իսկ քու օրովդ՝ տէր ամենաբարեպաշտ թագաւոր, ոչ թէ երկրի վրայ, այլ երկինքին երեսը տեղի ունեցան զարմանալի գործեր. որովհետեւ մեր Տիրոջ և Փրկչին Յիսուսի Բրիտոսի, Աստուծոյ Միածին Որդիին, մահուան դէմ տարած յաղթութեան նշանը, այսինքն երանելի խաչը, լուսաւոր ճառագայթներով երևցաւ Երուսաղէմի վերին: Արդարեւ, Ս. Պենտեկոստէի օրերուն, Ահեկան ամսուան սկիզբը, երրորդ ժամուն, լոյսէ կազմուած ամենայաղթ խաչը՝ երկինքին վրայ՝ սուրբ Գողգոթայի վերեւէն մինչև Զրիհնեաց սուրբ լիւր ցոլանալով կ'երևէր: Ոչ թէ մէկ կամ երկու հոգիներու միայն երևցաւ, այլ՝ քաղաքիս բոլոր բազմութեան յայտնապէս կ'երևէր: Ոչ թէ հարեանցի և արագ անցնող տեսիլքի մը պէս, այլ ժամերով ակնյայտի կերպով երկինքի երեսը կ'երևէր: Եւ իր բոցաճաճանչ փայլով արեգակի ճառագայթներուն կը յաղթէր. այլապէս՝ (եթէ արևի լոյսէն աւելի փայլուն չըլլար) անոնցմէ յաղթուելով պիտի ծածկուէր: Եւ այն աստիճան ուժգին էր զի տողներուս համար անոր ճառագայթումը որ առ հասարակ քաղաքի բոլոր բազմութիւնը սուրբ եկեղեցիներ փութացին: Եւ աստուածային այս տեսիլքէն երկիւղով և ուրախութեամբ լեցուած՝ մանուկներ և

ծերեր, այրեր և կիներ, և ամէն տարիքի մարդիկ, թէ՛ բնիկ և թէ՛ գուրտէն եկած քրիստոնեաներ, միահամուռ և միաբերան կ'օրհնէին և կը գովաբանէին զՅիսուս Քրիստոս, մեր Տէրը և Աստուծոյ Միածին Որդին։ Քանզի փորձով և գործնականապէս ապացուցուեցաւ թէ ամենաբարեպաշտիկ քրիստոնէից կրօնքը, ոչ թէ խօսքի իմաստութեամբ միայն կը հաստատուի, այլ նաեւ՝ Հոգիին յայտնութեամբ և անոր զօրութեամբ։ Մարդոցմէ չէ միայն որ կը պատմուի, այլ նաեւ երկինքէն, Աստուծոյ կողմէ կը վկայուի։

Արդ, որովհետեւ մենք, որ Երուսաղէմ կը բնակինք, այս հրաշքին մեր խիստ աչքերով ակնատես եղանք, Ամենաթագաւոր Աստուծոյ և Անոր Միածին Որդիին վայել երկրպագութիւն և զօհութիւն մատուցինք և պիտի մատուցանենք։ Եւ սուրբ տեղերու մէջ քեզի, աստուածասէր թագաւորիդ, երկար և յաւերժական աղօթքներ բրինք և պիտի ընենք։

Եւ որովհետեւ արժանի էր երկնաւոր այս տեսիլքին վրայով լուսութեամբ չանցնիլ, այլ աւետիլ դայն քու աստուածասէր բարեպաշտութեանդ, անոր համար փութացայ զբիւ, որպէսզի ի Յիսուս Քրիստոս քու յառաջագոյն ունեցած հաւատքի բարի հիման վրայ աւելի հաստատուիս։ Եւ ամէն առաքինութեամբ լեցուած՝ նոյնինքն զԱստուած քեզի զօրավիգ ունենալով, խաչի յաղթութեան նշանը աւելի պատրաստակամ ձեռով ամենքին պարծանքի առարկայ հռչակես, քեզի հետ կրես երկինքէն երեցած նշանը որուն լուսեղէն կերպարանքը երկինք ցուցնելով մարդոց՝ մեծապէս պանծացաւ։

Բայց այս հրաշագործութիւնը, ով աստուածասէր թագաւոր, մարգարէից վկայութեամբ և Աւետարանի մէջ եղած Քրիստոսի խօսքին համաձայն՝ կատարուեցաւ այժմ, և դարձեալ ապագային փառաւոր կերպով պիտի կատարուի։ Որովհետեւ Մատթէոսի Աւետարանին մէջ, երբ մեր Փրկիչը, Յիսուս Քրիստոս, գալիք իրերու մասին ծանօթութիւն կուտար իր երջանիկ առաքելոց, անոնց՝ որ իր հետ նստած էին, յայտնապէս ըսաւ. «Այն ատեն պիտի երևի Որդւոյ Մարդոյ նշանը երկինքի վրայ»։

Աւետարանը, այդ աստուածային Գիրքը, եթէ յաճախակի ձեռք առնես, այս

պատահած երեւոյթի մասին նախապէս անդ զրով տրուած վկայութիւնները պիտի զրուենս։ Որոնց, Տէր Թագաւոր, հոգիի յօժարութեամբ նայիլ կը յանձնարարեմ, որպէսզի մեր Փրկիչին Յիսուսի Քրիստոսի գրած կարգերը, որոնք գրուած են Աւետարանի մէջ, բազում երկիւղածութեամբ և զգուշութեամբ պահես։ որպէսզի հակառակորդ զօրութենէ մնաս չկրես։

Երուսաղէմէն գրուած այս առաջին թուղթը քեզի կը մատուցանեմ, ով աստուածասէր թագաւոր։ Կ'ուզեմ որ խօսքերս հասնին քեզի՝ հարազատ և ամենաբարեպաշտ մտերիմի, որպէսզի մեզի հետ երկրպագես Քրիստոսի, Աստուծոյ Միածին Որդիին և մեր Փրկիչին, որ ըստ աստուածային գրոց, մարդկութեան փրկութիւնը Երուսաղէմի մէջ կատարեց։ Որ այստեղ մահը կոխեց և իր պատուական արկնով մարդոց մեղքերը ջնջեց, և անապական կեանք ու հոգեւորական և երկնային շնորհներ պարգեւեց հաւասարապէս իրեն բոլոր հաւատացողներուն։ Ան իր զօրութեամբ և շնորհքով քեզ աւելի պայծառ և մեծամեծ բարեպաշտութեամբ պահպանէ, և վայելուչ ուղղութեամբ և արքայական հարազատ զարմովդ զարգացնէ։ Ինքն, Ամենաթագաւորն Աստուած, որ ամէն բարութեանց տուիչն է, շատ տարիներով և խաղաղական կեանքով պահէ զքեզ ամբողջ տունովդ, ամէն բարեգործութեամբ զարգարեալ, ի պարծանս Քրիստոնէից և ամբողջ աշխարհի։

Սուրբ Եկեղեցիներու հետ քու ունեցած սովորական ընտանութեամբ, Հոգի մայեցեոց վրայ քու ունեցած իշխանութեամբ, և ամենուրեւ հանդէպ քու ցոյց տուած մարդասիրութեամբ և մեծ բարեպաշտութեամբ և յաղթութեամբ լեցուած միասն։ Ամենուրեւ Աստուածը շնորհէ քեզի բազում խաղաղ տարիներ ամբողջ տունովդ, ով օգոստափառ աստուածասէր թագաւոր։ ողջ եղիր։

